# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Դարերու բախտորոշ հոլովումին մէջէն, հայ ժողովուրդը կրցեր է անցնիլ, առաւելապէս շնորհիւ իր Եկեղեցիին ու եկեղեցականներուն՝ որոնք հանդիսացած են արժանընտիր պահապաններ ազգային նկարագրին եւ սրբութեանց պահպանումին, ինչպէս նաեւ իմաստուն առաջնորդներ ժողովուրդին բարոյական ու հոգեկան զարգացումին։

Նիկոմիդիոյ նախկին եւ Պուլկարիոյ այժմու Առաջնորդ Գեր. Ստեփանոս Սրբազան՝ երջանկայիշատակ Ներսէս Պատրիարքի առաքինազարդ ծոռնատունը՝ մեզ կը ներկայանայ Հայ Առաքելական Եկեղեցւոյ խնկելի սրբութեանց որպէս խորհրդանիշը եւ կենդանի օրինակը։ Ան՝ հաւատաւոր եւ սրբակեաց հոգեւորական իր բովանդակ կեանքով նուիրուած է խունկի ու աղօթքի, պահքի ու ծոմի եւ իր կոչումին ծառայած է անաղարտ հաւատարմութեամբ։ Հայ եկեղեցական տարեգրութեանց մէջ աննախընթաց կորովով մը, ամբողջ կէս դար, ներքին ու արտաքին ամէն դժուարութեանց կուրծք տալով, իբր Առաջնորդ մեծ ձեռնհասութեամբ կառավարած է Նիկոմիդիոյ ընդարձակ ու բազմապահանջ թեմը, վայելելով անսահման ժողովրդականութիւն եւ անվերապահ համակրութիւն։

Ստեփանոս Սրբազան եղած է ժողովրդանուէր եւ պարզուկ հովիւ մը՝ իր հօտին հետ շնչած, անոր համար ապրած եւ անոր հետ տարագրութեան ցաւը ծնոր առնելով, գացած է մինչեւ Սուրիոյ անապատները։ Ազգին ու Եկեղեցիին ծառայութեան մէջ վերջին ծայր անշահախնդիր, ոչ ինչք եւ ոչ ալ դրամ ճանչցած է. իրեն բերուած նուէրները բաժնած է որբերուն, չքաւորներուն եւ բարեգործական հաստատութեանց։

Սրբազանին գործունէութեան տիրական եւ յաւէտ յիշատակելի գիծը եղած է շինարարութիւնը։ Նիկոմիդիոյ բազմաթիւ գիւղերուն մէջ կառուցած է եկեղեցիներ ու դպրոցներ, շինած է աղբիւրներ եւ նոյն իսկ ճամբաներ։ Այս անգամ եւս, իր արտայայտած փափաքին համաձայն, իր Յոբելեանէն գոյանալիք նիւթական հասոյթը պիտի յատկացուի Սօֆիայի մէջ Ազգ. Վարժարանի մը կառուցման՝ որուն այնքան զգալի պէտքը, այլեւս անտեղիտալի պահանջ մը դարձած է։

Ազգին ու Եկեղեցիին համար նուիրուած վաթսունամեայ այս անշեղ ծառայութիւնները, կ՚արժէ որ յիշատակուէին հանդիսաւոր առիթով մը, երբ Սրբազանը այլեւս կը գտնուի իր կեանքի վերջալոյսին մօտ։

Պուլկարիոյ ազգայիններու եւ արտասահմանի համակիրներու արտայայտած բուռն բաղձանքին ընդառաջ երթալով՝ Պուլկարահայոց Թեմական Խորհուրդը, Սօֆիայի Թաղականութիւնը ու Ազգ. Վարժարանի Հոգաբարձութիւնը միասնաբար՝ պարտականութիւն զգացին ծերունազարդ Սրբազանին քահանայական վաթսունամեայ յոբելեանը կատարել, իբրեւ գնահատում Ն. Գերապատուութեան բազմավաստակ կեանքին եւ իբր քաջալերութիւն հայ եկեղեցական դասուն։

Այս նպատակաւ, տարւոյս Յունվար 14ին, Սօֆիայի մէջ կազմուեցաւ Յոբելինական Կեդր. Յանձնաժողով մը, որ տուաւ հետեւեալ որոշումները.

1.— Գեր. Ստեփանոս Արքեպս. Յովակիմեանի Յոբելեանի օր հռչակել, 8 Յունիս 1930, Հոգեգալուստի օրը։

2.— Պուլկարահայ թեմի կարեւոր քաղաքներուն մէջ, Յոբելինական օժանդակ մարմիններ կազմել, նշանակեալ օրուան մէջ տօնելու Սրբազանին Յոբելեանը։

3.— Յոբելեարին յիշատակը յաւերժացնելու համար, այդ առթիւ գոյանալիք նիւթական հասոյթը, յատկացնել Սօֆիայի մէջ Ազգ. Վարժարանի մը կառուցման։ ՅՈԲԵԼԻՆԱԿԱՆ ԿԵԴՐ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՅՈԲԵԼԻՆԱԿԱՆ ԿԵԴՐ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Գեր. Երուանդ Եպս. Փէրտահճեան, Արժ. Տ. Խորէն Աւագ. Քհնյ. Ճամճեան, Արժ. Տ. Մեսրոպ Աւգ. Քհնյ. Անտոնեան, Վեր. Յակոբ Շահվէլէտեան, Ինժ. Էմմանուէլ Ճէրահօֆ (Ատենապետ Թեմական Խորհուրդի), Երուանդ Յակոբեան, Սեդրակ Գարալեան (Ատենադպիր Հոգաբարձութեան), Տիրան Մուրատեան, Գրիգոր Զաքարեան, Հայկ Թօփաքպաշեան, Մարտիկ Տ. Սարգիսեան, Պետրոս Այճեան, Միհրան Տէրտէրեան, Յարութիւն Փափազեան, Յակոբ Մարթաեան, Միհրդատ Սարըպօյաճեան, Գէորգ Մեսրոպ, Մելքոն Դաւիթեան, Յարութիւն Պօղոսեան, Տիգրան Մարտիրոսեան, Երուանդ Տ. Մեսրոպեան, Մարտիրոս Գօչունեան, Անդրանիկ Տօսթուրեան, Շաւարշ Գալուստեան, Ներսէս Մինասեան, Մկրտիչ Քօբարանեան։

## ԴԻՒԱՆ ԿԵԴՐ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Գեր. Երուանդ Եպս. Փէրտահճեան (Նախագահ), Արժ. Տ. Խորէն Աւագ. Քհն. Ճամճեան (Փոխ Նախագահ), Գրիգոր Զաքարեան (Ատենապետ), Սեդրակ Գարալեան (Ատենադպիր), Ա. Պ. Կիւլպէնկեան (Գանձապահ)

Յոբելինական Կեդր. Յանձնաժողովը իր մէջէն ընտրած է Գործադիր Մարմին մը հետեւեալ կերպով կազմուած.—

Յարութիւն Փափազեան (Ատենապետ), Տիգրան Մարտիրոսեան (Ա. Ատենադպիր), Մարտիրոս Գօչունեան (Բ. Ատենադպիր), Գէորգ Մեսրոպ, Յարութիւն Պօղոսեան, Շաւարշ Գալուստեան, Մելքոն Դաւիթեան

Բոլոր գրութիւնները ուղղել Գործադիր Մարմնոյ Ատենապետ Յարութիւն Փափազեանի անուան, հետեւեալ հասցէով՝ Monsieur HAROUTIOUN PAPAZIAN, 12, Rue Pirotzka SOFIA (Bulgarie)

Իսկ դրամական բոլոր առաքումները ուղղել Կեդր. Յանձնաժողովի Գանձապահ Տիար Ա. Պ. Կիւլպէնկեանի, հետեւեալ հասցէով՝ Monsieur A. B. GULBENKIAN, 3, Rue Banski SOFIA

digitised by A.R.A.R.@

# ՍԻՈՆ ՆՈՒԻՐՈՂՆԵՐ 1930-Ի ՀԱՄԱՐ

Մանուկեան Արթիւր Սարկաւագ Երուսաղէմէն՝ Տէր Մարտիրոսեան Ա. ին (Niagara Falls. N. Y.)

Մխայեան Գրիգոր Երուսաղէմէն՝ Տէրունեան Բ. ին (Խարդում)։

Իփէքեան Աղասի Աղեքսանդրիայէն՝ Որբուհիներու Տան (Աղեքսանդրիա)։

Առաքելեան Մատթէոս Salem - Depot. N. H.էն՝ Պաքաեան Մ. ին (Nashua. N. H.)

Ներսէսեան Յ. Pittsburgh. PA.էն՝ Գալֆայեան Որբանոցին (Կ. Պոլիս)։

## ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

10. Ամիրտովլաթի Ամասիացւոյ ԱՆԳԻՏԱՑ ԱՆՊԷՏ կամ Բառարան Բժշկական Նիւթոց, ի լոյս էած հանդերձ ծանօթագրութեամբք Կ. Յ. Բասմաճեան, Փոխ Աշխատակից Պարիսի Հայ Բժշկական Միութեան, Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1927, մեծ 8° էջ XIIV+ԼԱ +766 և Զ Տախտ.։ Գինն է՝ 150 Ֆրանս. Ֆր.։

11. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՐԱՄԵԱՆ Յուշարձան Վան—Վասպուրականի։ Հրատարակութիւն «Յուշարձանի» Կեդր, Հրատ. Յանձնախումբի։ Հատոր Ա. մեծ 8° էջ 502. Տպգր. Արամ Գասապեան, Աղեքսանդրիա, 1929։ Հատոր Բ. մեծ. 8° էջ 542, Տպգր. Արամ Ստեփանեան. Աղեքսանդրիա, 1929։ Երկու հատորներու գինը՝ 100 Եգ. Դահ. կամ 5 Տօլար (թղթակազմ), 120 Ե. Դ. կամ 6 Տօլար (լաթակազմ)։

12. Հ. ԱՐՍԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ, Մի՛ գրէք... Այլ գրեցէք... Հայ լեզուի ուղղագրութեան դասեր, Երկրորդ Տպագրութիւն, բոլորովին փոփոխուած, Վենետիկ, Մխիթարեան Տպագրութիւն, 1930, 8° էջ 310. հասցէ. Imprimerie Armenienne, St. Lazare, Venise (Italie)։

13. ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՏԱՂԱՍԱՑ ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑԻ և իր քերթուածները, ուսումնասիրութեամբ հրատարակեց Հ. Մ. Պոտուրեան, 1924—30, Տպ. Պուքրէշ — Ռումանիա, 16° էջ 60, Գին 20 Լէյ = 4 Ֆրանք։

14. ՀԱՆՐԻ ԲՕՐՏՕ, Մանկավարժը չի սիրեր տղան. Թարգմանեց Պ. Գէորգեան, Հրատ. և Տպգր. Հայ Դպրոց Պըննէն և Ժընէվ. Զուիցերիա, 1930, 8° էջ 130, Գին՝ 1,25 Ֆրանք Զուից.։

15. ՎԱՀԷ-ՀԱՅԿ, ՀԱՅՐԵՆԻ ԾԽԱՆ, Արձակներ, Հէքեաթներ, Պատմուածքներ. Տպ. 1930, Ֆրէզնօ, Քալիֆորնիա. 8° էջ 126, Գին 75 Սէնթ։

16. Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ, հիմնուած 1908ին ի Գահիրէ. և վերակազմուած 1924ին ի Լօզան. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ և ՀԱՇՈՒԵԿՇԻՌ 23րդ Շրջանի (1928). Տպ. «Մասիս» Փարիզ, մեծ 8° էջ 96։

17. ՉԷՅԹՈՒՆԻ ՉԱՅՆԸ, կազմեց Դր. Գ. Գուտուլեան. Հրատ. Զէյթունի Հայրենակցական Միութեան Կեդրոնական Վարչութեան, Տպ. ԱԶԱՏ Պէյրութ, էջ 16. Գին 5 Ֆրանք։

18. ՏՐՈՎԱԴԱՅԻ ՀՐԴԵՀԸ [Կատակախաղ մէկ արար]. Հեղ. Ակուստ Թուրշի, թարգմ. Յակոբ Յ. Պուճիգանեան, հրատ. ՍԻՀՈՒՆ Մատենաշարի, թիւ 1. Տպ. Կ. Տօնիկեան, Պէյրութ (1930), 8° էջ 25. Գին 3 Ֆրանք։

19. ԱՐՑՈՒՆՔՈՏ ՓՈՒՆՋ ՄԸ ՏՈՔԹՈՐ ՏԻԳՐԱՆ ԱԼԼԱՀՎԷՐՏԻԻ Անմոռաց Յիշատակին (Նուիրուած իր զաւկին կողմէ). Տպ. 1930, «Մասիս», Փարիզ, 8° էջ 54։

20. ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ Հայ ոչ-կուսակցական Միութեան. Տպ. 1929, Ա. Ստեփանեան, Աղեքսանդրիա, 8° էջ 12+4։

21. Բիւզանդ Թօփալեան — Արձան, ԱՅԳԱՀԱՆԴԷՍ. Քերթուածներ, 1924—1929. Տպ. «Արաքս» — Բ. Թ., (Հալէպ) 1930, 8° էջ 40, Գինը՝ 6 Ֆրանք։

22. The Sunny side of the Armenian People; Its Past and Present. By Mesrob Bagdasarian [Formerly of McMaster University, Toronto]. Dedicated to the Memory of the Armenian Martyrs of the Warld War. Published by the Armenian Union of Canada, 34 King Street East, Toronto. 8° P.

23. An ancient Race, By the General Secretary, M. S. C. C. 8° P. 12.

digitised by A.R.A.R.@